— Ինչպէ՞ս էք կարծում, պարոն քարտուղար, այդ անցքը նոյնպէս չէ՞ տանում դէպի մի բիւրեղեայ ապարանք, ուր հիւրիներն եւ փէրիները պառկած են մարջանի ծառերի ներքոյ եւ սքանչանում են «հազարան բլբուլի» հազար ու մէկ եղանակներով:

— Դուք ծաղրում էք ինձ, պարոն բժշկապետ, — պատասխանեց երիտասարդը նոյնպէս ժպտելով, — բայց ես կասեմ ձեզ, որ այդ անցքը դէպի բիւրեղեայ ապարանքը չէ տանում, որովհետեւ դէպի ծովը չէ գնում: Մարջանի ծառերը ծովի յատակի վրայ են բուսնում եւ բիւրեղեայ ապարանքն էլ ջրերի խորքումն է լինում: Իսկ այդ անցքը, քարափը կտրելով, իջնում է դէպի ցած, յետոյ գետնի տակով գնում է դէպի այն ձորը, որի մի մասը երեւում է բլուրների հետեւից: Նա ձեռքը մեկնեց դէպի այն կողմը:

— Ներեցէք, խնդրեմ, իմ նկատողութիւնը դուք, ի հարկէ, կատակի տեղ կընդունէք: Իսկ ձեր այժմեան պատմածը դարձեալ շատ հետաքրքիր է: Ես շատ բերդեր եմ տեսել, բայց մի այսպիսի անցք առաջին անգամն եմ տեսնում իմ կեանքում, երեւի դրա ծայրը, այսինքն այն տեղը, որ դուրս է գալիս ձորի մէջ, անպատճառ ծածկուած կը լինի:

— Անտարակոյս, մանաւանդ մի դէպքից յետոյ, որ պատահեց մի տարի առաջ. պահապան զինուորներից մէկը սովորութիւն էր ունեցել վառօդ գողանալ եւ այդ անցքով դուրս տանել, վաճառել հայ խանութպաններին: Զինուորին եւ խանութպաններին սաստիկ պատժեցին, եւ անցքի մուտքը այն ժամանակից գոցուեցաւ:

— Որքա՜ն զարգացած է եղել հին ժամանակներում արհեստը այդ երկրում, — ասաց Ասլանը, արտայայտելով իր խորին հիացմունքը: — Այդ անցքերը հազարաւոր տարիներ գոյութիւն ունեն, բայց այնքան ճարտարութեամբ շինուած են, որ մինչեւ այսօր չեն խանգարուել, պահպանում են իրանց նշանակութիւնը:

— Դուք աւելի կը զարմանաք, պարոն բժշկապետ, երբ կը տեսնէք Թօփրակ-կալէի եւ Չարխի-ֆալակի գաղտնի անցքերը, — պատասխանեց առաջնորդը մի առանձին պարծենկոտութեամբ, երբ լսեց Ասլանի գովասանքները (կարծես այդ հրաշալիքները նրա պապերն էին ստեղծագործել): — Երբ այստեղ կը վերջացնենք, ես կը տանեմ ձեզ դէպի յիշեալ հնութիւնները, որոնք բաւական հեռաւորութեան վրայ են գտնուում այստեղից: Դուք կը տեսնէք այնտեղ աւելի զարմանալի ստորերկրեայ անցքեր, որոնք այնքան երկար են տարածուում գետնի տակով, որ շատերը հաղորդակցութիւն ունեն հէնց այդ բերդի հետ: